ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պետական մարմնի անվանումը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝ 03.06.2026թ.

N	Դիտողության/ առաջարկի բովանդակությունը	Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը	Դիտողության/ առաջարկի հեղինակը	Դիտողության / առաջարկի ներկայացման ամսաթիվը	Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ	Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7
1	Ո՞ր հասարակական կազմակերպություններն են ներգրավված եղել բյուջեի քննարկումներին: Հեղինակը նշեց նախորդ տարում դաբաղի բաց սցենարը, որը կարելի էր կանխել: Առաջարկվեց բյուջեի նախնական աշխատանքներում ներգրավվել ոլորտի շահագրգիռ համապատասխան ՀԿ-ին:	1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	Արմեն Գիգոյան Հայաստանի պանրագործների միության նախագահ	29.05.2026	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակին մանրամասն ներկայացվեց «Գյուղատնտեսական կենդանիներ պատվաստում» միջոցառումը, որը բացառապես գիտականորեն հիմնավորված տվյալների հիման վրա է իրականացվում՝ սերտ համագործակցելով անասնաբուծության ոլորտի 3 ասոցացիաների հետ, ընդ որում՝ մշտադիտարկումն իրականացվում է ըստ ընթացակարգի ՍԱՏՄ-ի, ԳԾԿ ՊՈԱԿ-ի միջոցով:	29.05.2026
2.	Ինչու՞ ենք պարբերաբար վարակի	1116-11001	Արմեն Գիգոյան	29.05.2026	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը	29.05.2026

	լուրջ խնդիրների բախվում. կառավարման գործիքակազմի խնդիր ունենք:	Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	Հայաստանի պանրագործների միության նախագահ		տեղեկացվել է ծրագրի մանրամասներին, մասնավորապես այն, որ յուրաքանչյուր կենդանու հիվանդության դեպք առանձնահատուկ է և լոկ թվերով եզրահագել, սխալ է: Այս տարի ձեռք բերվեց նոր պատվաստանյութ դաբաղ հիվանդության դեմ, քանի որ տարածաշրջանում արձանագրվեց վարակի նոր տեսակ, որը համարվեց ռիսկային նաև ՀՀ համար, եկել էր Աֆրիկայից: Հետևաբար, ռիսկերի գնահատման արդյունքում քաղաքական որոշում կայացվեց ձեռք բերել տվյալ տեսակի դիմաց պատվաստանյութը: Ավելին, ՀՀ-ն միակն էր տարածաշրջանում, որը կարողացել էր վերլուծել և ձեռք բերել տվյալ տեսակի պատվաստանյութը: Առաջարկվեց հեղինակին ներկայացնել իր առաջարկները գրավոր՝ հետագայում հաշվի առնելու տեսանկյունից, քանի որ թե ասոցացիաների, թե տնտեսավարող սուբյեկտների տեսակետից	

					նախարարությունը պատրաստակամ է համագործակցության կոնկրետ առաջարկի դեպքում:	
3.	Բրուցելոզի դեմ ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում: Որևէ միջազգային փորձ ուսումնասիրվե՞լ է: Հեղինակը ներկայացրեց, որ վերջինս դժվար հայտնաբերվող է, առկա է իսպանական փորձը՝ RB վակցինան, ինչպես նաև հետսովետական երկրների փորձը: Արդյո՞ք այս մասով իրականացվում է մշտադիտարկում:	1116- 11001 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	Արմեն Ավետիսյան Տոհմային Կենդանիների Անասնաբույծների ասոցիացիա ՀԿ	29.05.2026	Հեղինակին ներկայացվեց այն, որ բրուցելոզի տարածման գործում հիմնական գործոնը մարդկայինն է, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների ցածր իրազեկվածությունը և սխալ անասնապահության վարումը: Այո, միջազգային փորձն ուսումնասիրվել է, աշխատում ենք մի շարք միջազգային կառույցների հետ և այո դուք իրավացի եք Իսպանիան լիկվիդացրել է բրուցելոզը 30 տարվա ընթացքում, որը հսկայական բյուջե է պահանջում այն էլ իդեալական վերահսկողական ապարատ և տնտեսավարողների կողմից իդեալական կատարողական ունենալու դեպքում: Միևնույն ժամանակ ԱՄՆ փորձը եթե դիտարկենք, ընդհանրապես պատվաստում չեն իրականացնում և զուտ ազատվել են սպանդի	29.05.2026

					ճանապարհով: Ունենք տարբեր փորձեր և որպեսզի հստակ որոշում կայացվի, դա հսկայական վերլուծություն է պահանջում և հստակ ճանապարհային քարտեզ, հարցն, այո, առաջնահերթություն է: ԷՆ անցյալ տարի համագործակցել է տնտեսավարողների հետ որպեսզի իրացնեն բրուցելոզով հիվանդ կենդանիներին, կնքվել են պայմանգարեր: ՀՀ ԷՆ միշտ տնտեսավարողի կողքին է և փորձում է իր գործիքակազմով աջակցել:	
4.	Պահպանման տեխնոլոգիաների հետ կապված ծրագիր է առաջարկվել, որը չի ընդունվել: Ի՞նչ սկզբունքով է խաղողագործության հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում, ինչու՞ արձանագրությունները չեն հրապարակվում: իրազեկման աշխատանքներն արդյունավետ չեն:	1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր	Արարատի խաղողագործների միություն ՀԿ Արսեն Սիմոնյան նախագահ	29.05.2026	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ձևավորվում է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 646-Ն որոշմամբ հաստատված Հիմնադրամի կանոնադրության 26-րդ կետի համաձայն: Խորհուրդը բաղկացած է 13 անդամից, որոնցից 7-ը պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ են, իսկ 6-	29.05.2026

	Առաջարկի հեղինակի կողմից նշվեց, որ խաղողագործության և անասնապահության ոլորտը գնում է կործանման:				ը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի ներկայացմամբ նշանակված մասնավոր հատվածի և գիտական համայնքի ներկայացուցիչներ: Ինչ վերաբերում է նիստերի արձանագրությունների հրապարակմանը, ապա դրանց հասանելիությունն ապահովվում է Հիմնադրամի կանոնադրության և գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Հիմնադրամը մշտապես համագործակցել է Արարատի խաղողագործների միության ներկայացուցիչների հետ, իսկ միության հիմնադրման օրվանից իրականացվել է ակտիվ փոխգործակցություն ոլորտին առնչվող բազմաթիվ հարցերի շուրջ: Համագործակցության շրջանակում կազմակերպվել են հանդիպումներ, աշխատանքային քննարկումներ և տեղեկատվության փոխանակում:	

					Այդ համագործակցության ընթացքում քննարկվել են նաև խաղողի պահպանման տեխնոլոգիաներին վերաբերող առաջարկներն ու հնարավոր լուծումները: Առաջարկի շրջանակում ներկայացված գաղափարներն ու մոտեցումները եղել են քննարկման առարկա, և դրանց վերաբերյալ Հիմնադրամի դիրքորոշումը, ինչպես նաև առկա հնարավորություններն ու սահմանափակումները ներկայացվել են Արարատի խաղողագործների միությանը: Բացի այդ, այս համագործակցության շրջանակում Հիմնադրամի միջնորդությամբ գաղափարով հետաքրքրված միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից, մասնավորապես GIZ-ի կողմից իրականացվել են տարբեր աջակցման միջոցառումներ: Մասնավորապես, Միությանը տրամադրվել են խաղողի պահպանման և փաթեթավորման ժամանակակից միջոցներ,	

					իսկ 2025–2026 թվականներին GIZ-ի և ԱԿԲԱ Ֆեդերացիայի հետ համատեղ կազմակերպվել են թեմային առնչվող կարողությունների զարգացման դասընթացներ՝ ներգրավելով ոլորտի առաջատար մասնագետ Ուզբեկստանից:	
5.	Վերջին տարիների անասնապահության ծրագրերը ԷՆ կողմից իրականացվող աննախադեպ են սկսած 1977 թվականից՝ սուբսիդավորման տեսակետից՝ ոչխարաբուծության, մեղվաբուծության ձկնաբուծության տավարաբուծության գծով: Ինչ վերաբերում է բրուցելոզին, ապա թանկ կենդանինին ներկրում ենք, որը ռիսկի տակ է իհարկե, սակայն խելացի անասնաշենքը թույլ է տալիս ինչ-որ տեղ պահվածքն ապահովել, սակայն մեթոդ կա դա հիվանդ ցուլերին վերացնելն է, եթե մենք	1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	Հայաստանում տոհմային ոչխարաբույծների ասոցիացիա ՀԿ Տիգրան Չիթչյան (նախագահ)	29.05.2026	Առաջարկն ընդունվեց:	29.05.2026

	անցնենք արհեստական սերմնավորման ծրագրին, որը տարածենք 10 մարզերում և սերմնավորող տեխնիկներն հրահանգենք շահառուների հետ ևս աշխատել, ապա դա կնպաստի բրուցելոզի նպաստմանը, քանի որ բրուցելոզի 50%-ը գնում է արտադրողից էգին:					
6.	Հողային ռեսուրսի խնդիր է առկա: Կերային բազան չի կարողանում ապահովվել: Անհրաժեշտ է զարգացող լոկոմոտիվային տնտեսություններին աջակցել և շահառուներին խոշորացույցով անցկացնել, որպեսզի գումարները չփոշիացվեն:	1116 Անասնաբուժական ծառայություններ	Արմեն Ավետիսյան Տոհմային Կենդանիների Անասնաբույծների ասոցիացիա ՀԿ	29.05.2026	Եթե դիտարկենք 2018 թվականի նկատմամբ, ապա ԷՆ բյուջեն 7-8 անգամ 2025 թվականին աճել է, միայն 2026թ.-ին 2025թ. նկատմամբ բյուջեն կրկնապատկվել է՝ 80 մլրդ անցնում է: Այսչափ մեծ աջակցություն գյուղատնտեսության ոլորտում իրականացվող անհերքելի է, որը մեծ ծանրաբեռնվածություն է: Այս պահին էլ համակարգող փոխնախարարը ՀԿ-ի, հետ քննարկման է, որը ապագայում դառնալու են նոր ծրագրային առաջարկներ: Այսքանով	29.05.2026

					հանդերձ ցանկացած ծրագիր գնահատման կարք ունի միշտ ուշադրության կենտրում պահել, որպեսզի ցանկացած ազդակի դեպքում կարողանանք լրամշակել, ինչին էլ ուղղված է այսօրվա քննարկումը:	
7.	2026 թվականին նախատեսվում է արդյո՞ք աշնանացան ցորենի արտադրության խթման ծրագիր և ասոցիացիաներին որոշակի աջակցության մեխանիզմներ կարո՞ղ են կիրառվել, թե ոչ:	1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	«Սերմեր և տնկանյութեր արտադրողների ասոցացիա» ՀԿ Իշխան Հովսեփյան (նախագահ)	29.05.2026	Հարկ է նշել, որ բուսաբուծության աջակցության ծրագիրն ամենահաջողված ծրագրերից է, որն արդեն 3-րդ տարին անընդմեջ իրականացվում է: Եթե 2024 թվականին շուրջ 4900 շահառուների կողմից իրականացվել էր շուրջ 17000 հա հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի ցանք, ապա 2025 թվականին շուրջ 5200 շահառուի կողմից իրականացվել էր շուրջ 24000 հա ցանք: 2025 թվականին աշնանացան ցորենի ցանքերն աննախադեպ են, համաձայն ՀՀ ՎԿ հրապարակումների իրականացվել է շուրջ 71 000 հա ցանք և ՀՀ մարզպետարաններից տրամադրված օպերատիվ	29.05.2026

					տեղեկատվության համաձայն 39000 հա-ը միայն Բուսաբուծության աջակցության ծրագրի շրջանակներում են: Հարկ է նշել, որ Ծրագրի իրականացումն ունի մեծ ազդեցություն նաև տեղական սերմնարտադրության վրա՝ հաշվի առնելով, որ նախորդ տարի արտադրվել է շուրջ 5400 տ սերմ, որի մեջ գերակշռում են հացահատիկային մշակաբույսերի սերմերը: Ծրագրի շրջանակներում աշնանացան ցորենի ցանքերի դիմաց փոխհատուցման տրամադրումն ընթացքի մեջ է, արդյունքները դեռևս չեն ամփոփվել, որից հետո կդիտարկվի 2026 թվականին աշնանացան ցորենի ցանքերի համար պետական աջակցության ծրագրի իրականացումը: Իհարկե կփորձենք այնպես անել, որ հնարավորինս վաղ ժամկետում տնտեսավարողները իրազեկված լինեն: Ինչ վերաբերում է ասոցիացիաներին, ապա	

					Էկոնոմիկայի նախարարությունը կարևորում է վերջիններիս դերը, որոնք կարող են մասնակցություն ունենալ ոլորտի քաղաքականության մշակմանը և նպաստել ոլորտի զարգացմանը: Էկոնոմիկայի նախարարությունը միջազգային տարբեր կառույցների կողմից իրականացվող սերմնաբուծության ոլորտի աջակցության ծրագրերի շրջանակներում կդիտարկի նաև «Սերմեր և տնկանյութեր արտադրողների ասոցիացիայի» մասնակցություն առաջարկի ներկայացումը:	
8	Կաթի արտադրության ոլորտի նախատեսված սուբսիդիոն միջոցառումների մասով պանրագործների ասոցացիան դեմ է եղել նմանատիպ սուբսիդիաներին, այդ հարցը քննարկվել է՞, հիմնավորվե՞լ է, որ դա տնտեսապես բեռ է:	1116 Անասնաբուժական ծառայություններ	Արմեն Գիգոյան Հայաստանի պանրագործների միության նախագահ	29.05.2026	Նշված աջակցությունը ոչ թե հիմնականում ուղղված է կաթի վերամշակման գործընթացին էր ուղղված, այլ կենդանիների գլխաքանակի ապահովմանը: Իհարկե ամենախոշոր գլխաքանակի նվազում արձանագրվել է 2016-2017թթ. սակայն անասնապահության մեջ գլխաքանակի ավելացումը և	29.05.2026

					մթերատվության ավելացումը բավականին երկար գործընթաց է ի տարբերություն գյուղատնտեսության մյուս ոլորտների՝ առնվազն 4-5 տարի պահանջվող: Քանի որ համաձայն ԱՎԾ տվյալների կա նաև որոշակի գլխաքանակի նվազման միտումներ և ծրագրի միտումը նաև գլխաքանակի պահպանումն է, վերլուծություն է իրականացվել և համաձայն ԱՎԾ տվյալների ավելի շատ կովերի գլխաքանակն է նվազել և դա խթան կհանդիսանա կովերի գլխաքանակն ավելացնելու համար: Կովերը մթերատվության համար նաև էական դեր են խաղում: Սա կարևոր քայլ է գլխաքանակի նվազման միտումը զսպել և հետագայում ըստ արդյունքերի կերևա ծրագիրը լավարկել, թե այլ միջոցներ ևս ձեռնարկել:	
9	Առաջարկվում է 26.03.2020թ. N355-Լ որոշման մեջ հստակեցնել սահմանված 1 մլրդ ՀՀ	1104- 12001 Տնտեսության արդիականացման միջոցառմանը	Արդշինբանկ ԲԲԸ Արմինե Մելիքյան Կորպորատիվ բիզնես	01.06.2026	1 մլրդ ՀՀ դրամ առավելագույն սուբսիդավորման գումարի չափի վերաբերյալ հստակ նշված է 26.03.2020թ. N355-	01.06.2026

	դրամ առավելագույն սուբսիդավորման գումարի չափը: 1 մլրդ դրամն բոլոր նպատակներին է վերաբերում, թե 1 ուղղությանը:	պետական աջակցություն	վերլուծական վարչության պետ		Լ որոշման 5.1 կետում, ինչպես նաև 6-րդ կետի 4-րդ ենթակետում: Սակայն, եթե դա տարընթերցում է առաջացնում, ապա առաջիկայում սպասվող փոփոխությունների ժամանակ այդ մասը կհստակեցվի: Ինչ վերաբերում է 1 մլրդ դրամ առավելագույն գումարը բոլոր նպատակներին է վերաբերում, թե 1 ուղղությանը, ապա նշենք, որ ծրագրի 5.1 կետի համաձայն՝ միևնույն շահառուն նպատակային ծրագրի շրջանակներում կարող է օգտվել օժանդակության ներքո կիրառելի վարկերի/լիզինգի **բոլոր նպատակներից, ընդ որում, 5-րդ կետով սահմանված նպատակներով վարկերի/լիզինգի սուբսիդավորվող մասի ընդհանուր չափը չպետք է գերազանցի որոշմամբ սահմանված առավելագույն սուբսիդավորման գումարի չափը:**	
10	Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն վարկը մի	1104-12001 Տնտեսության արդիականացման	Արդշինբանկ ԲԲԸ Մարինե Մարտիրոսյան	01.06.2026	Նշվեց, որ տվյալ հարցը յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության ներքին	01.06.2026

	ֆինանսական կազմակերպությունից մյուսը տեղափոխման ժամանակ ի պաշտպանություն տնտեսավարող սուբյեկտի: Կիրառել միանման մոտեցում՝ սահմանելով հիմնական փաստաթղթերի ցանկ: Միաժամանակ նաև վարկը տրամադրելուց տեղեկատվական բազան բավարար չէ փոխկապակցված անձանց տեսնելու համար:	միջոցառմանը պետական աջակցություն			քաղաքականության, ռիսկերի գնահատման և կառավարման շրջանակում է, և յուրաքանչյուր բանկ ինքնուրույն է գնահատում իր կողմից համապատասխան պարտավորության ստանձնման հետ կապված ռիսկերը: Միաժամանակ առաջարկվեց դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ համապատասխան վերահսկողական և տեղեկատվական փոխանակման մեխանիզմների ներդրման հնարավորությունը քննարկելու նպատակով: Մասնավորապես, առաջարկվեց դիտարկել միասնական տեղեկատվական հարթակի (պորտալի) ստեղծման հնարավորությունը, որտեղ կարտացոլվեն տարբեր ֆինանսական կազմակերպությունների հետ շահառուների պետական ծրագրերով ունեցած վարկային և այլ ֆինանսական հարաբերությունները:	

					Նման գործիքի առկայությունը կնպաստի ինչպես նախարարության, այնպես էլ ֆինանսական կազմակերպությունների կողմից ծրագրերի իրականացման ընթացքի առավել արդյունավետ մշտադիտարկմանը և հետագա վերահսկողության իրականացմանը	
11	Հարցը վերաբերում է արտահանման դիվերսիֆիկացիային: Դիտարկելով 2027 թվականի բյուջետային հայտում ընդգրկված 1165 ծրագրի միջոցառումները՝ 11002, 12006, 12009 և դրանց գծով բյուջետային հատկացումները հարց է առաջանում 11002 միջոցառման մասով: Կա՞ արդյոք այսօր հաստատված և գործող ՀՀ արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականություն: Որքանով տեղյակ եմ՝ չկա: Դրա փոխարեն կա արտահանման	1165-11002 ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ	ACSES հիմնադրամ Հայկազ Ֆանյան	01.06.2026	Բովանդակային առումով միջոցառումն արտացոլումն է էությունը: Տեքստիլն այն ոլորտն է, որը կարողացել է օգտվել ծրագրի դեպի Եվրոպա արտահանման ուղղությունից: Նույն տեքստիլում 7000-8000 մարդ է աշխատում: նշված գումարը տեքստիլ ոլորտին աջակցելու համար ծախսելը բավականաչափ արդյունավետ է գնահատվում: Եթե կան առավել արդյունավետ և առարկայական առաջարկներ, ապա ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը բաց է քննարկման համար: Մինչև 2022 թվականը գործել է	01.06.2026

	ռազմավարական ծրագիր, որն ընդունվել է 30.07.2025 թվականին: Ստացվում է, որ իրականացվում է միջոցառում, գումար է ծախսվում մի ռազմավարության վրա, որը փաստացի գոյություն չունի, իսկ հաստատված ռազմավարական ծրագիրը մինչ օրս չի ֆինանսավորվել: Առաջարկվեց 1165-11002 միջոցառման անվանումն առնվազն խմբագրել:				արտահանմանն ուղղված արդյունաբերական ռազմավարությունը, որի շրջանակներում նախատեսվում էր նաև արտահաման ուղղված գործիքակազմ: Հետագայում, երբ արդեն նոր ռազմավարություն պետք է մշակվեր, արդյունաբերության ռազմավարությունը չհաստատվեց. քննարկվեց ընդհանուր արտահանման ռազմավարություն մշակել: Եվ քանի որ բյուջետային գործընթացներում ծրագիրն արդեն այդ անվանմամբ էր ներկայացված ու հաստատված, և, ըստ էության, համահունչ էր Արտահանման ռազմավարության կոնցեպտին, ծրագրի իրականացումը շարունակվեց՝ պահպանելով նույն անվանումը: Կարծում եմ, կարևոր է կենտրոնանալ ավելի շատ բովանդակության, քան անվանման վրա, քանի որ բովանդակությունը փաստացի արտահանմանն ուղղված կոնտեքստում է	

					դիտարկվում: Տարիներ շարունակ դա այդպես եղել է: Յուրաքանչյուր տարի ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի, հաստատվում է արտահանման ծավալների աճին և դիվերսիֆիկացմանն ուղղված համապատասխան միջոցառումների և ցուցահանդեսների ցանկը: Ինչ վերաբերում է Արտահանման ռազմավարական ծրագրի բյուջետավորմանը, ապա տեղեկացնենք, որ 2027-2029թթ. բյուջեի նախագծում նույն 1165 ծրագրի ներքո ներկայացվել է 5 նոր նախաձեռնություն, որոնց ֆինանսավորումը, սակայն, մերժվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Հաշվի առվելով այդ հանգամանքը, հայտնում ենք, որ ուրախ կլինենք Ձեզ տեսնելու և Ձեր դիտարկումները լսելու ՀՀ ֆինանսների նախարարության մեր գործընկներների հետ բյուջեի բաց քննարկումներին:	

12	Հարցս վերաբերում է զբոսաշրջության մասով ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկմանը: Որքանով տեղյակ եմ ՖՆ մերժել էր, սակայն սա շատ կարևոր գործիք է: Միգուցե հարցը կրկի՞ն բարձրաձայնենք և արագ լուծում տանք:	1190-11002 Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը	Բիզնեսի օրենսդրական աջակցություն ՀԿ Սերգեյ Խաչատրյան	01.06.2026	ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարցի հետ կապված օրենսդրական նախագիծը ներկայացվել է տուրիզմի ֆեդերացիայի կողմից, որն ուղարկվել է ՖՆ և սպասում ենք դիրքորոշման. ՖՆ-ից հանդիպում ենք խնդրել քննարկման նպատակով:	01.06.2026
13	Մյուս հարցը վերաբերում է ծաղիկ արտադրող ջերմոցային տնտեսություններին աջակցելուն, որոնց արտահանման միակ շուկան ՌԴ էր: Բյուջեից ֆինանսավորում իրականացվում է, սակայն խորհրդատվություն չի իրականացվում: Միգուցե բանկերի հետ բանակցեք, որպեսզի սնանկացման դեպքում մի որոշ ժամանակ սառեցվեն բանկային տոկոսները: Տեղյա՞կ եք դեպի Եվրոպա արտահանման լոգիստիկ ծախսերը որքան են:	1187-12016 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	Բիզնեսի օրենսդրական աջակցություն ՀԿ Սերգեյ Խաչատրյան	01.06.2026	Պետությունը կարող դիմել բանկերին առաջարկով մի որոշ ժամանակ սառեցնելու բանկային տոկոսները, բայց չէ՞ որ բանկերն իրևենք ևս տնտեսավարողների պես մի բիզնես պրոեկտ են: Ներկայիս իրավիճակում առաջացած խնդիրները դրվում է բանկերի, հետո պետության վրա, դա այդքան էլ ճիշտ չէ: Ինչ վերաբերում է պետության կողմից աջակցության ծրագրերին ,ապա մեր կողմից իրականացվող մի շարք ծրագրերում նոր գործիքներ են ներդրվել /մասնավորապես ծաղկի կոմպոնենտի ներդումը արտահանման սուբսիդավորման ծրագրում/,	01.06.2026

					տոկոսադրույքներ են փոփոխվել այս պահին առաջացած ռիսկերը քիչ թե շատ մեղմելու համար և շուտով կառավարության որոշումը կնդունվի:	
14	Ինչու՞ է զբոսաշրջության ծրագրի մասով այդքան քիչ բյուջե պլանավորվել 2027 թվականի համար՝ լոկ 800 մլն դրամ... չէ՞ որ տուրիզմը ՀՆԱ-ի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի: Այստեղ տնտեսելու կարիք չկա: Սա այն ոլորտն է, որտեղ ներդրված ամբողջ գումարը ետ վերադարձվում է: Չէ՞ որ հասել էինք 1.5 մլրդ դրամ շեմին և կրկին կրճատվեց: Տուրիզմով հպարտանում ենք, սակայն քիչ գումարներ հատկացնում: Ներքին տուրիզմի զարգացման հրաշալի գործիք էր սոց. փաթեթը, որը ևս կրճատվեց ենթադրվում է, որն ուղղվեց առողջության համընդհանուր	1190-11002 Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը	Տուրիզմի հայկական ֆեդերացիա» ՀԿ Մեխակ Ապրեսյան, նախագահ	01.06.2026	"Առողջական համընդհանուր ապահովագրության ներդրումը զբոսաշրջության ոլորտի հաշվին չէ, չնայած, որ սոցիալական փաթեթի շրջանակում շահառուները կարող են որպես առանձին բաղադրիչ սոցփաթեթի գումարներն ուղղել նաև առողջական ապահովագրությանը, ինչի արդյունքում չեն կարող օգտվել այլ բաղադրիչներից, այդ թվում՝ հանգստի ապահովման ծառայությունից:Առաջարկվեց մասնակցել ՖՆ հետ քննարկմանը և հիմնավորել զբոսաշրջության ոլորտի ֆինանսավորման անհրաժեշտությունը: Միաժամանակ կատարվեց լրացում, որ կառավարության կողմից իրականացվող այլ ծրագրերը ևս մեծապես աջակցում են Հայաստանի մասին տեղեկատվության տարածմանը, հայկական	01.06.2026

	ապահովագրությանը, սակայն դա դասական հզոր հարկաբյուջետային քաղաքականության գործիք էր: Առնվազն 3 մլրդ գումար է տուրիզի հաշվին տնտեսություն մտնում: Միակ ոլորտն է, որ օրենքով հայտարարված է գերակա ճյուղ և անտեսված է:				զբոսաշրջային արդյունքի հանրահռչակմանը, ինչպես օրինակ՝ Մոնդիալ դե Բրյուսել, Wizzair-կազմակերպած "Let's Get Lost" արշավը, որոնք, չնայած "Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը" միջոցառման շրջանակում չեն կազմակերպվել, այնուամենայնիվ մեծ ազդեցություն են ունեցել զբոսաշրջության զարգացման վրա":	
15	Արտագնա տուրիզմի մասով որևէ՞ աջակցություն է նախատեսված է: Ի՞նչ փուլում է գտնվում ծանուցումների գործընթացը:	1190-11002 Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը	«Տուրիզմի միացյալ ֆեդերացիա» Մարիամ Անդրոյան Խորհրդի նախագահ	01.06.2026	"Արտագնա զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց աջակցության ծրագիր ներկա պահին չունենք: Ծանուցման մասով հատկանշական է, որ Կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի N136-Ն որոշմամբ նախատեսված է սույն թվականի հուլիսի 1-ից գործարկել notify.tourism.gov.am հարթակը: Եթե հարթակը սահմանված ժամկետում գործարկվի, ապա հնարավոր կլինի ապահովել զբոսաշրջային ծառայություն	01.06.2026

					մատուցող անձանց ծանուցման գործընթացը:	